ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Մեխակ Դանիելի Ալոյանը Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում գտնվող, վարձակալության իրավունքով տրամադրված 07-004-0226-0041 կադաստրային ծածկագրի 0,002 հա մակերեսով բնակավայրերի նշանակության խառը կառուցապատման հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վաճառելու խնդրանքով: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է համաձայնություն տալ քաղաքացու հետ կնքված վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման ընդունումը 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի

պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան